

ԱՆՈՒՂԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կազմեց պահեստի փոխգնդապետ Ա. Ամիրզադյանը, ՊաՀԱԿ

«Ռազմավարության իրական նպատակն է նվազեցնել դիմադրության հնարավորությունները»

Լիդդել Հարթ



Ռազմավարությունը առավել հակիրճ կարելի է բնորոշել իբրև ռազմական միջոցների բաշխման և կիրառման արվեստ՝ քաղաքականության նպատակներն իրագործելու համար: Ռազմավարությունը զբաղվում է ոչ միայն զորքերի տեղաշարժերով, այլ նաև այդ տեղաշարժերի արդյունքներով: Երբ զինված ուժերի կիրառումը նույնանում է ճակատամարտի վարման հետ, ապա այդ ուժերի տեղաբաշխումը և այդպիսի ուղղակի գործողության կառավարումը վերաբերում են մարտավարության ոլորտին:

Եթե մարտավարությունը ռազմավարության կիրառությունն է ավելի ստորին մակարդակում, ապա ռազմավարությունը իր հերթին մեծ ռազմավարության՝ ռազմական քաղաքականության կիրառությունն է ստորին մակարդակում: Թեև, ըստ էության, մեծ ռազմավարությունը համընկնում է ռազմական քաղաքականության հետ, որով դեկավարվում են պատերազմը վարելիս, սակայն, ի տարբերություն ավելի հիմնարար, այն է՝ մեծ (պետական) քաղաքականության, որը որոշում է ռազմական քաղաքականության նպատակը, «մեծ ռազմավարություն» եզրույթը արտացոլում է քաղաքականությունը՝ գործողության մեջ:

Մեծ կամ բարձրագույն ռազմավարության դերն այն է, որ համակարգի և ուղղորդի երկրի կամ երկրների խմբի բոլոր ռեսուրսները՝ հանուն պատերազմի քաղաքական նպատակի իրագործման, նպատակ, որ առաջադրում է պետական քաղաքականությունը:

Մեծ ռազմավարությունը պետք է ի հայտ բերի և համախմբի երկրի կամ երկրների խմբի տնտեսական և մարդկային բոլոր հնարավորությունները, որպեսզի ապահովի զինված ուժերի գործողությունները: Նույնը վերաբերվում է և բարոյահոգեբանական հնարավորություններին, քանզի նույնքան կարևոր է բարոյական վեհ հատկանիշներ ներարկել ժողովրդին, որքան՝ տիրապետել պայքարի նյութական միջոցներին: Մեծ ռազմավարությունը պետք է նաև կարգավորի ուժերի ու միջոցների բաշխումը ցամաքային, ծովային և ռազմաօդային ուժերի, ինչպես նաև զինված ուժերի և արդյունաբերության միջև:

Ռազմական հզորությունը մեծ ռազմավարության սոսկ մեկ միջոցն է, որը հակառակորդի դիմադրելու կամքի թուլացման նպատակով պետք է օգտագործի ֆինանսական, դիվանագիտական, առևտրական ու նրա գաղափարական ճնշման բոլոր հնարավորությունները:

Եթե ռազմավարությունը սահմանափակվում է սուկ պատերազմին առնչվող հարցերի ուսումնասիրությամբ, ապա մեծ ռազմավարությունը զբաղվում է ոչ միայն պատերազմին, այլև հետագա խաղաղությանը առնչվող խնդիրներով: Մեծ ռազմավարությունը պետք է ոչ միայն զուգակցի պատերազմի զանազան միջոցները, այլև ապահովի նրանց այնպիսի գործունեությունը, որը թույլ կտա խուսափելու գալիք խաղաղության պահպանմանն ու բարգավաճմանը նույնիսկ աննշան վնասելուց: Ռազմավարության հաջողությունը գլխավորապես կախված է նպատակի և միջոցների ստույգ հաշվարկից և համաձայնեցումից: Նպատակը պետք է համապատասխանի առկա միջոցների ընդհանուր ծավալին, իսկ միջոցները, որ օգտագործվում են յուրաքանչյուր միջակա խնդիրների իրագործման համար՝ վերջնական նպատակին հասնելու ճանապարհին, պետք է համապատասխանեն տվյալ խնդրի կարևորությանը: Միջոցների ավելցուկը կարող է նույնքան վնասակար լինել, որքան՝ պակասը:

Մարտավարությունն ընդգրկում է ճակատամարտի ոլորտը, իսկ ռազմավարության իրագործման համար անհրաժեշտ է ռազմական գործողություններն ըստ հնարավորին հասցնել նվազագույնի: Այս դրույթը, թերևս, կվիճարկեն նրանք, ովքեր հակառակորդի զինված ուժերի ոչնչացումը համարում են պատերազմի միակ ճշմարիտ նպատակը, այսինքն՝ ռազմավարության միակ նպատակը ճակատամարտն է: Իրականում, եթե անգամ պատերազմի հիմնական նպատակը վճռական ճակատամարտն է, ապա ռազմավարության նպատակը այն է, որ այդ ճակատամարտը իրականացվի առավել նպաստավոր պայմաններում: Մինչդեռ որքան պայմաններն ավելի նպաստավոր լինեն, այնքան ավելի կնվազի ռազմական գործողություններ վարելու անհրաժեշտությունը: Ուստի, ռազմավարությունը առավել կատարյալ է, եթե ապահովում է նպատակի իրագործումը առանց լուրջ ռազմական գործողությունների:

Ինչպես ռազմական միջոցները եղած հնարավորություններից սուկ մեկն են՝ մեծ ռազմավարության նպատակներն իրականացնելու ճանապարհին (ինչպես վիրաբույժի գործիքներից մեկը), այնպես էլ ճակատամարտը սուկ միջոցներից մեկն է՝ ռազմավարության նպատակը իրագործելու համար: Եթե պայմանները նպաստավոր են, ապա ամենաարագ արդյունքը սովորաբար տալիս են ռազմական միջոցները, իսկ եթե պայմանները բարենպաստ չեն, ապա այդ միջոցների օգտագործումը նպատակահարմար չէ:

Ռազմավարության նպատակը հակառակորդի կայունության խախտումն է, որի հետևանքով թշնամու բանակը կամ կազմալուծվում է, կամ ապահովվում է նրա ջախջախումը ճակատամարտում:

Ինչպես է իրականացվում հակառակորդի կայունության ռազմավարական խախտումը:

Ֆիզիկական կամ նյութական առումով այն հետևանք է այնպիսի գործողությունների, որոնք հանգեցնում են.

ա) հակառակորդի զորադասավորվածության խախտման՝ ստիպելով նրան փոխել ճակատը, գործի կազմակերպումն ու խմբավորումը,

բ) հակառակորդի ուժերի մասնատման,

գ) հակառակորդի մատակարարման համակարգի խախտման,

դ) հաղորդակցման ուղիների համար սպառնալիքի ստեղծման, որոնցով հակառակորդը կարող է անհրաժեշտության դեպքում նահանջել և վերստին ամրանալ միջակա սահմաններում կամ ռազմավարական թիկունքում:

Հոգեբանական առումով հակառակորդի կայունության խախտումը հետևանք է վերոհիշյալ գործոնների ներազդեցության աստիճանը նրա հրամանատարության վրա: Այն առավել ազդեցիկ կլինի, եթե հակառակորդը անապասելիորեն ըմբռնի իր կացության աննպաստ լինելը և վճռի, որ չի կարող հակազդել: Հակառակորդի հոգեբանական կայունությունը առավելապես խախտվում է այն մտքի առաջացման հետևանքով, ըստ որի՝ ինքը թակարդն է ընկել:

Պատերազմում յուրաքանչյուր խնդիր, յուրաքանչյուր սկզբունք մեղալի նման երկու երես ունի: Այստեղից՝ անհրաժեշտություն է առաջանում փոխզիջման՝ երկու կողմերի փոխհամաձայնեցման: Այս անխուսափելիության պատճառն այն է, որ պատերազմը մղվում է թշնամական կողմերի միջև, որոնցից յուրաքանչյուրը հարված հասցնելիս պետք է նաև պաշտպանական միջոցներ ձեռնարկի: Ազդու հարված հասցնելու համար հարկ է, որ հարձակումը լինի անակնկալ և ուժերը հարվածի ուղղությամբ կենտրոնացած: Մինչդեռ ուժերը կարելի է արդյունավետ կենտրոնացնել սոսկ այն դեպքում, եթե հակառակորդի գորքերը ապակենտրոնացած են: Սա իրագործելու համար սովորաբար հարկ է լինում ապակենտրոնացնել նաև յուրային ուժերը: Արդ, թեև տարօրինակ է հնչում, այդուհանդերձ ուժերի իրական կենտրոնացումը հետևանք է նրանց ապակենտրոնացման: Երկկողմանի պատերազմի հաջորդ պահանջն այն է, որ մեկ օբյեկտի գրավումը ապահովելու համար հարկ է միաժամանակ սպառնալիք ստեղծել մի քանի օբյեկտների նկատմամբ: Քանզի եթե ձեր հարվածի ուղղվածությունը ստույգ հայտնի է հակառակորդին, ապա նա հնարավորություն է ստանում նախազգուշական միջոցներ ձեռք առնելու և թուլացնելու ձեր հարվածի ուժգնությունը: Մինչդեռ, միաժամանակ մի քանի օբյեկտների սպառնալիքով, դուք շեղում եք հակառակորդի ուշադրությունը, հարկադրում ապակենտրոնացնել իր ուժերը: Դեռ ավելին, հակառակորդի ուշադրությունը շեղելու նման միջոցը խիստ շահավետ է, քանզի այն հնարավորություն է ընձեռնում ձեր ուժերի գերակշռող մասը կենտրոնացնել գլխավոր հարվածի ուղղությամբ, այդպիսով առավելագույնս հեշտեցնելով ուժերի կենտրոնացման պահանջը նրանց ապակենտրոնացման անհրաժեշտության հետ:

Տարբերակների բացակայությունը հակասում է պատերազմի բուն էությանը: Այն մեղանչում է XVIII-րդ դարում Բուրսիեի¹ առաջ քաշած իմաստուն դրույթի դեմ, ըստ որի՝ «ռազմարշավի պլանը պետք է ունենա մի քանի տարբերակներ և այնքան խնամքով կազմված լինի, որ այդ տարբերակներից մեկը անպայման պսակվի հաջողությամբ»: Այդ դրույթով էր շարժվում Բուրսիեի հետևորդը՝ երիտասարդ Բոնապարտը, որ մշտապես ձգտում էր «գործողությունները մշակել երկու տարբերակով»: Յոթանասուն տարի անց Շերմանը² ևս հանգեց նույն հետևությանը և ձևակերպեց իր նշանավոր կանոնը. «Հակառակորդը պետք է մշտապես կանգնած լինի երկրնորանքի առջև»: Հարմարվելու ունակությունը օրենք է. ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ առօրյա կյանքում վերապրում են առավել հարմարվողականները: Իսկ պատերազմը, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ մարդկանց պայքարի կենտրոնացված ձև՝ ընդդեմ շրջակա միջավայրի:

Գործողությունների պլանը պետք է ծառի նման ճյուղեր ունենա, եթե ցանկանում ենք, որ այն պտուղ տա: Առանց տարբերակների պլանը նման է մերկ սյունի:

¹ **Բուրսիե, Ֆրանսուա Անտուան Լուի**՝ ֆրանսիացի ռազմական գործիչ, դրագունյան դիվիզիոնի գեներալ, կոմս: https://ru.wikipedia.org/wiki/Бурсье_Франсуа_Антуан_Луи

² **Շերման, Ուիլյամ Տեկումսե**՝ ամերիկյան քաղաքացիական պատերազմի գեներալ և ժամանակակից պատերազմների գլխավոր ճարտարապետ: <https://hy.gov-civ-guarda.pt/battle-karbala>

Պատերազմի ոչ միայն մեկ, այլև բոլոր սկզբունքները կարելի է արտահայտել մեկ բառով՝ «կենտրոնացում»: Սակայն առավել ստույգ կլինի ասել փոքր-ինչ ընդարձակ՝ «ուժի կենտրոնացում թուլության դեմ»: Այն կախված է հակառակորդի ուժերի ապակենտրոնացումից, որն իր հերթին կախման մեջ է ձեր սեփական ուժերի տեղաբաշխումից: Ձեր ապակենտրոնացում, նրա ապակենտրոնացում, ձեր կենտրոնացում, այսպիսին պետք է լինի գործողությունների հաջորդականությունը, ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ գործողությունը նախորդի հետևանքն է: Ուժերի իրական կենտրոնացումը հետևանք է նրանց նախնական ապակենտրոնացման:

Ահավասիկ, սա է հիմնական սկզբունքը, որի ճիշտ ըմբռնումը հնարավորություն կտա խուսափելու գլխավոր և առավել տարածված սխալից. ձեր ուժերի կենտրոնացման դեմ իր ուժերը կենտրոնացնելու համար հակառակորդին ընձեռնել գործողությունների և ժամանակի ազատություն:

Ընդհանուր առմամբ առկա են, ութ հիմնական սկզբունքներ, որոնցից վեցը դրական, երկուսը՝ բացասական: Դրանք կիրառելի են թե՛ ռազմավարության, և թե՛ մարտավարության մեջ:

Դրական սկզբունքներ

1) Ընտրեք ձեր միջոցներին համապատասխանող նպատակ:

Նպատակի ընտրության ժամանակ պետք է ղեկավարվել առողջ բանականությամբ և սթափ հաշվարկով: Անհեթեթեություն է կույ տալ ավելին, քան կարող եք մարսել: Ռազմական իմաստնության առաջին ցուցիչը հնարավորը անհնարինից տարբերելու ունակությունն է: Սովորեք փաստերին նայել աներկյուղ չկորցնելով հավատը յուրային ուժերի նկատմամբ: Հավատը (այն հավատը, որ օգնում է հասնել թվում է, թե անհասանելիին) անչափ պետք կգա, երբ սկսվեն ռազմական գործողությունները: Վստահությունը նման է մարտկոցի էլեկտրական հոսանքին, թույլ չտաք, որ այն սպառվի՝ ուժերը անտեղի վատնելով: Հիշեք, որ ձեր վստահությունը անօգուտ է, եթե ձեր մարտկոցի տարրերը՝ մարդիկ, բարոյապես ընկճված են:

2) Երբեք մի մոռացեք նպատակի մասին, երբ ձեր ծրագիրը համապատասխանեցնում եք փոփոխված իրադրության հետ: Նկատի առեք, որ նպատակին դուք կարող եք հասնել տարբեր ուղիներով, սակայն հետևեք, որ միջակա յուրաքանչյուր օբյեկտի գրավումը ձեզ մոտեցնի նախանշված նպատակին: Օբյեկտների ընտրության ժամանակ գնահատեք նրանց գրավման հնարավորությունը և թե ինչ չափով այն կօժանդակի հիմնական նպատակի իրականացմանը:

3) Գործողությունների համար ընտրեք այն ուղղությունը, որտեղից հակառակորդը հարված չի սպասում: Ձեզ դրեք հակառակորդի տեղում և նրա փոխարեն որոշեք, թե ո՞ր ուղղությունը նա կհամարի առավել անվտանգ, ուստի և՛ նախազգուշական միջոցներ չի ձեռնարկի:

4) Գործեք ամենափոքր դիմադրության ճանապարհով, այդ ուղղությամբ շարժվելով այնքան ժամանակ, քանի դեռ կարող եք առանց ավելորդ կորուստների ընթանալ դեպի նախանշված օբյեկտը, որի գրավումը ձեզ կմերձեցնի նպատակին:

5) Ընտրեք այնպիսի ուղղություն, որը միաժամանակ սպառնում է մի քանի օբյեկտների: Դրանով հակառակորդը կկանգնի երկրնորանքի առջև և, օգտվելով դրանից, դուք կարող եք գրավել ծայրահեղ դեպքում մեկ՝ առավել թույլ պաշտպանված օբյեկտը, իսկ գուցե և՛ մի քանի օբյեկտներ: Չկա առավել տարածված սխալ, քան այն, երբ «գործողության համար մեկ ուղղության ընտրություն» ճշմարիտ

գաղափարը շփոթում են «հարվածի համար մեկ ուղղության ընտրություն» գաղափարի հետ, որը սովորաբար չի պսակվում հաջողությամբ:

6) Ձեր ծրագրի ճկունությունը և գորքերի դասավորությունը իրականացրեք ի նկատի առնելով իրադրության հնարավոր փոփոխությունները: Դուք պետք է նախատեսեք և հետագա միջոցառումներ մշակեք տարբեր իրադրությունների համար՝ հաջողություն, անհաջողություն, նաև մասնակի հաջողություն, որ առավել հաճախադեպ է պատերազմի ժամանակ: Ձորադասավորությունը պետք է հնարավորություն ընձեռնի արագորեն զարգացնելու հաջողությունը կամ իրադրության փոփոխության հետ՝ վերախմբավորելու ուժերը:

Բացասական սկզբունքներ

7) Ամբողջ ուժով մի հարվածեք, քանի դեռ հակառակորդը պատրաստվում է դրան, այսինքն՝ երբ նա հարմար դիրք է գրավում՝ հարվածը ետ մղելու և կամ նրանից խույս տալու համար: Պատմությունը ուսուցանում է, որ եթե հակառակորդը իսպառ թույլ չէ, ապա հնարավոր չէ նրան ազդու հարված հասցնել, քանի դեռ կաթվածահար չի արվել դիմադրության կարողությունը և հարվածից խույս տալու ունակությունը: Հակառակորդին ջլատում են նրա ուժերի կազմալուծման և վերջինիս հոգեբանական համարժեքի՝ բարոյալքման միջոցով:

8) Անհաջողության մատնված հարձակումը մի վերսկսեք նույն ուղղությամբ: Ձորքի գուտ քանակական հզորացումը դեռևս բավարար հիմք չէ հարձակումը վերսկսելու համար, քանզի, օգտվելով հրադադարից, հակառակորդը ևս կարող է նույնն անել: Առավել ևս՝ ձեր հարձակման բարեհաջող դիմագրավումը առավել կգորացնի նրա մարտական ոգին:

Ի լրումն այս սկզբունքների, *անհրաժեշտ է լուծել երկու առանցքային խնդիր՝* խախտել հակառակորդի կայունությունը և զարգացնել հաջողությունը: Առաջինը պետք է իրականացնել նախքան հարված հասցնելը, երկրորդը՝ նրանից հետո: Այս երկուսի համաեմատությամբ հարվածը ինքնին բավականին դյուրին խնդիր է: Հակառակորդին հնարավոր չէ ազդու հարված հասցնել, եթե դրա համար նախապես նպաստավոր պայմաններ չէք ստեղծել: Հնարավոր չէ այդ հարվածը զարգացնելով հասցնել վճռական արդյունքի, եթե չօգտվեք երկրորդ նպաստավոր հնարավորությունից, որը երևան կգա ավելի վաղ, քան հակառակորդը կսթափվի առաջին հարվածից հետո: Այս երկու խնդիրների հույժ կարևորությունը երբեք բավարար ուշադրության չի արժանացել: Նախապատրաստական շրջանում հիմնական ուշադրությունը դարձվում է մարտավարական գործելաձևերի, հարձակողական մարտի տարրերի մանրակրկիտ մշակմանը, որի հետևանքով մթազնում է հոգեբանական գործոնի դերը և նշանակությունը:

Մարտիկները վարժվում են կանոնակարգով գործելուն, փոխանակ դիմելու անսպասելի քայլերի: Երբեմն հրամանատարը, զանց առնելով ակնհայտը, անակնկալի մեջ է գտնում խնդրի լուծման բանալին: Անսպասելի գործողությունները անգոր են հաջողություն երաշխավորել, և այդուհանդերձ, նրանք բարենպաստ պայմաններ են ստեղծում՝ հաջողության հասնելու համար:

Պատերազմի նպատակը խաղաղության՝ ձեզ համար առավել նպաստավոր կացության նվաճումն է: Ուստի պատերազմ վարելիս հարկ է մշտապես հիշել այն նպատակների մասին, որոնք ցանկանում եք իրականացնել պատերազմից հետո: Այս ճշմարտությունը, որ ընկած է Կլաուզևիցի բնորոշման հիմքում՝ «պատերազմը քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով», այսինքն՝

քաղաքականության շարունակությունն է պատերազմի և անգամ խաղաղության ընթացքում, չի կարելի մոռացության մատնել: Այն պետությունը, որ իր ուժերը վատնում է ընդհուպ մինչև լիակատար սպառում, իր քաղաքականությունը դարձնում է անհիմն՝ ի չիք դարձնելով ապագայի հեռանկարները: Եթե դուք ձեր ջանքերը կենտրոնացնեք բացառապես այն ուղղությամբ, որ հասնեք հաղթանակի, անտեսելով պատերազմի հետևանքները, ապա դուք կարող եք այնքան հյուժվել, որ ի գորու չեք լինի օգտվել հետագա խաղաղությունից: Միաժամանակ հետպատերազմյան խաղաղությունը գրեթե հաստատապես անկայուն կլինի, քանզի հիմքում նոր պատերազմի սաղմեր կունենա:

Հաջորդ հետևությունը, որ բխում է պատմության համայնապատկերի վրա մեծ ռազմավարության ուսումնասիրությունից, այն է, որ ռազմավարության ընդհանուր տեսությունը անհրաժեշտ է հարմարեցնել պետության ընդհանուր քաղաքականության բնույթին: Քանզի էական տարբերություն կա այն նպատակների միջև, որոնց ձգտում են նվաճողական և ոչ նվաճողական պետությունները, ուստի անհրաժեշտ է տարբերակել նաև այն մեթոդները, որ նրանք կիրառում են իրենց քաղաքականությունը իրագործելիս:

Նվաճողական պետությանը, որին առկա կացությունը չի բավարարում, անհրաժեշտ է հաղթանակ՝ իր նպատակը իրագործելու համար, ուստի և նա պետք է հանդուգն քայլերի դիմի: Ոչ նվաճողական պետությունը իր նպատակին կարող է հասնել հակառակորդին պարզապես պարտադրելով հրաժարվել զավթման փորձից: Այդպիսի երկիրը հասնում է հաղթանակի հակառակորդի մտահոգումը կազմալուծելու միջոցով: Այդ երկրի խնդիրն է՝ գտնել ռազմավարության այնպիսի ձև, որը հնարավորություն կտա նպատակը իրականացնել առավել խնայողական միջոցով՝ իրեն ապահովագրելով հնարավոր անախորժություններից թե՛ ներկայում և թե՛ ապագայում: Ուժերի տնտեսումը և հաջողությունը լավագույնս ապահովվում են պաշտպանական և հարձակողական գործողությունների համակցությամբ, որոնք հիմնված են մեծ տարաշարժության վրա, որ հնարավորություն է տալիս արագ և հուժկու հարված հասցնել:

Կործանարար պատերազմները, որոնցում հակառակորդները վատնում էին իրենց ուժերը, և առանձնապես Երեսնամյա պատերազմը XVIII-րդ դարի քաղաքական գործիչներին ստիպեցին ըմբռնել, որ պատերազմում նպատակն իրականացնելու համար հարկ է սանձել պատվասիրությունը և կրքերը: Այն ծնեց ռազմական գործողությունները սահմանափակելու, այսինքն՝ ավելորդ կորուստներից խուսափելու միտում, որոնք կարող են բացասաբար անրադառնալ ետպատերազմյան հեռանկարների վրա: Մյուս կողմից, այն պատերազմող կողմերին դրդում էր խաղաղ բանակցություններ սկսել, եթե հաղթանակի հեռանկարը կասկածելի էր թվում:

Թեև պատերազմը հակասում է բանականությանը, քանի որ այն հարցերը ուժով լուծելու միջոց է, երբ բանակցությունները դրական արդյունքի չեն հանգեցնում, այդուհանդերձ պատերազմի ընթացքը պետք է վերահսկվի բանականության կողմից, եթե ցանկանում ենք հասնել նրա նպատակին: Սա բացատրվում է հետևյալ կերպ: Չնայած մարտը ֆիզիկական գործողություն է, այդուհանդերձ, նրա ղեկավարումը իրականացվում է մարդկային մտքի միջոցով: Որքան ավելի կատարյալ է ձեր ռազմավարությունը, այնքան ավելի հեշտությամբ ու քիչ կորուստներով կհասնեք հաղթանակի:

Որքան ավելի մեծ ուժեր վատնեք, այնքան ավելի ու ավելի կմեծանա հավանականությունը, որ պատերազմը աղետ կդառնա ձեզ համար: Եթե անգամ ձեզ

հաջողվի հասնել հաղթանակի, դուք նվազ ուժեր կունենանք՝ ձեր շահերը պատերազմից հետո պաշտպանելու համար:

Որքան ավելի խիստ միջոցներ կիրառեք, այնքան ավելի կգազագեցնեք ձեր հակառակորդներին, ինչը, բնականաբար, կուժեղացնի այն դիմադրությունը, որ դուք փորձում եք հաղթահարել: Այսպիսով, որքան ավելի հավասար են ուժերը, այնքան ավելի խելամիտ է խուսափել ծայրահեղ միջոցներից, որոնք հանգեցնում են հակառակորդի գորքերի և ժողովրդի համախմբմանը իրենց առաջնորդների շուրջ:

Որքան դուք ավելի համառորեն պարտադրեք խաղաղության ձեր պայմանները՝ զավթարարության միջոցով, այնքան ավելի մեծ խոչնդոտներ կստեղծեք ձեր ճանապարհին:

Եթե դուք հասնեք ձեր ռազմական նպատակին, ապա որքան ավելի զիջումներ պահանջեք պարտված երկրից, այնքան նրա մեջ ավելի շուտ կառաջացնենք իրերի առկա վիճակը փոփոխելու ձգտումը:

Ուժը արատավոր շրջան է, ավելի ճիշտ՝ պարույր, եթե ուժի գործադրումը չի վերահսկվում ողջախոհ հաշվարկով: Մարտական ոգին անհրաժեշտ է ռազմադաշտում հաջողության հասնելու համար: Սակայն այն ռազմիկը, որ մարտում սառնասրտություն է պահպանում, առավելություն ունի ցասումից կուրացած ռազմիկի նկատմամբ, որը մշտապես պետք է գտնվի չթուլացող հսկողության տակ: Քաղաքական գործիչը, որ ազատություն է տալիս իր զգացմունքներին, կորցնում է իր նկատմամբ հսկողությունը, ուստի և՛ չի կարող դեկավարել երկիրը և պատասխանատվություն կրել նրա ճակատագրի հանդեպ:

Հաղթանակը իր բուն նշանակությամբ ենթադրում է, որ հետպատերազմյան խաղաղությունը և ժողովրդի նյութական դրությունը պետք է լինեն ավելի բարվոք, քան նախքան պատերազմը: Այդպիսի հաղթանակը հնարավոր է սոսկ այն դեպքում, եթե արդյունքի հասնում ես արագորեն, կամ տևական ջանքերը ծախսվում են խնայողաբար՝ երկրի ներքին պաշարներին համապատասխանի միջոցներին:

Պատերազմում համառությունը արդարացվում է սոսկ բարենպաստ պայմանների առկայությամբ հաջող ավարտի հասնելու դեպքում, այսինքն այնպիսի խաղաղության հեռանկարների առկայությամբ, որը փոխհատուցում է պայքարում կրած մարդկային տառապանքը: Անցյալի փորձի խոր վերլուծությունը ցույց է տալիս, որ պետությունները հաճախ կարող են առավել մերձանալ իրենց նպատակի իրականացմանը, եթե, օգտվելով անդորրից, վիճելի հարցերը կարգավորեն բանակցությունների միջոցով, և ոչ թե ձգտեն շարունակել պատերազմը մինչև հաղթական ավարտ:

Պատմական փորձը վկայում է, որ պետությունները միմյանց վստահում են այն չափով և այնքան ժամանակ, քանի դեռ այդ համապատասխանում է նրանց շահերին: Պետությունը որքան քիչ է հաշվի նստում բարոյական պարտությունների հետ, այնքան շատ է հակված հարգելու ֆիզիկական ուժը: ***Սոսկ միամիտը կհամարի, թե կարելի է փրկագնով ազատվել հակառակորդի զավթիչ գործողություններից, այլ խոսքով՝ խաղաղեցնել զավթիչին, քանզի հաշտարարությունը միմիայն գրգռում է ախորժակը:*** Այսուհանդերձ, զավթիչներին կարելի է սանձել: Ուժի պաշտումնաբը նրանց դարձնում է գերզգայուն՝ ընդդիմացող ավելի հզոր ուժի ահարկու սպառնալիքի նկատմամբ:

Պատմությունը բավականաչափ փաստեր է ընձեռնում այն մասին, որ պարտության պատճառը ոչ այնքան թշնամու հարձակումն է, որքան պատերազմի առաջացրած ներքին քայքայումը և հյուծումը: Անորոշ վիճակը շատ տանջալից է. հաճախ այն ինքնառոչնչացման է մղում և՛ մարդկանց, և՛ պետություններին:

Այդուհանդերձ, անորոշությունը ավելի գերադասելի է, քան հաղթանակի ուրվականին հետամուտ լինելով՝ ուժասպառվելը: Դեռ ավելին, զինադադարը հնարավորություն է տալիս ուժերը վերականգնել և զարգացնել, մինչդեռ զգոնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը ստիպում է մշտապես գտնվել գերլարված վիճակում: Բարբարոսության ոգին թուլանում է զինադադարի ընթացքում, մինչդեռ պատերազմը հզորացնում է այն՝ կրակի վրա յուղ ավելացնելով:

Աղբյուրը. Лиддел Гарт Б.Х. Стратегия непрямых действий. — М.: ИЛ, 1957. Liddel Hart B.H. Strategy The Indirect Approach. — N.-Y., 1954. [Стратегия непрямых действий](#)